ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ-Ա

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ԴՊՐՈՑ» ՍՊԸ-Ի ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «Սոցիալական Ձեռներեցների դպրոց» ՍՊԸ-ի տնօրեն Գոհար Մկոյանի 30.09.2025թ. դիմումը, Սպիտակ համայնքի ղեկավարի առաջարկությունը և հաշվի առնելով, որ «Դարձի՛ր Սոցիալական Ձեռներեց, շենացրո՛ւ Քո ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԸ» կրթական ծրագրի մեկնարկին մասնակցել է Սպիտակ համայնքի 21 բնակավայրի 225 բնակիչ և ընտրվել է 22 մասնակից՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ «Դարձի՛ր Սոցիալական Ձեռներեց, շենացրո՛ւ Քո ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԸ» կրթական ծրագիրն և ծրագիրն իրականացնելու համար Սպիտակ համայնքի բյուջեից տրամադրել 7 000 000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: